# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

*<<05>> <<հունիս >> 2013* N55
*ք. Եղեգնաձոր*

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ <<ՋԵՐՄՈՒԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 6-ի N102 հրամանով հաստատված կարգի 1-ին մասի 1.5-րդ կետի ե) ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2013 թվականի հունիսի 5-ի թիվ 53 և 54 կարգադրությունները.*

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ**

*1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող <<Ջերմուկի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:*

*2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

Է. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2013 թվականի

հունիսի 5-ի թիվ 55 կարգադրության

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Ջերմուկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը.

1. Խաչիկ Գևորգյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

2. Վազակ Կարապետյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ

3.Անահիտ Սարգսյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ.ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ